

## ՃԱ.ՊՈՆԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ \*)

Այս երկրում աւելի քան որևէ ուրիշ երկրում՝ ամենքը՝ նոյնիսկ հասարակ դասի մարդիկ, ինչպէս Սատումա-իմօթ (կարմիր բաղրջան) վաճառողը, և՛ ցիրկերի ըմբշամարտը, և՛ գիւղացին, և՛ գետակների վրայ աշխատողները հաւասարապէս ունեն բանաստեղծական խիստ զարգացած հակումն. Որևէ դաշտանկարի, որևէ տեսարանի ներդաշնակութիւնն ու հմայքը նրանք զգալ և ոտանաւորով արտայայտել գիտեն և այն առանց ջանքերի, առանց աշխատանքի, միանգամայն բնական ձևով: Հազարաւոր օրինակներով կարելի է ապացուցանելու նրանց այս յատկութիւնը, բայց ես մէջ կը բերեմ միայն երկուաը: Մահուղեղէնի մի հասարակ վաճառական, որին ես միթարանք էի խօսում իր տաս տարեկան աղջկայ մահուան առիթով, ինձ պատասխանեց հետևեալ ոտանաւորով.

«Ի՞չո՞ւ ժպտալ այսուհետե,

Երբ Կիյօն էլ չկայ,

Եւ ինչո՞ւ արտասուել.

Կեանքն խիստ գարզելի է,

Աստուածները տարան իմ զաւակին՝

Այդ կեանքից ազատելու համար»:

Միւսը՝ աւելի կարճ և խիստ դժուար ժանրի (Հալիկարի) բանաստեղծութիւնն, ասաց հասարակ ժողովրդին պատկանող մի կին ամուսնական օջաղը ձգելուց յետոյ, ուր նա էլ երբէք ոտք կոխելու չէր.

«Եթէ աննուղելին կարելի է ուղղել,

Դա հնարաւոր է միայն մի բանով—արցունքով»:

Ես յաճախ և ամենամեծ հաճոյքով էի գնում Կոժիմա Սոյիօի հիւրասէր տունը, նա այն ժամանակ պատգամաւոր էր Նազանօթ. ամեն անգամ տանտէրը քաղաքավարութեամբ ու հետաքրքրութեամբ իմ երկրի մասին խօսելուց յետոյ չէր մո-

\*) Փրանսիական *La Revue հանդէս* (1904, № 3), J. C. Balet-ի յօդատձի թարգմանութիւնը:

ունում երբէք չափագանցացրած և տարօրինակ շեշտաւորութեամբ արտասանել կտորներ ամենայայտնի նօերից (դրամատիկական պատմուածքներ) և ապա անցնել իր կազմած փոքրիկ պոէմային:

Ճապոնական բանաստեղծութիւնը լաւ հասկանալու և նրա համեմատաբար նեղ սահմանները տեսնելու համար՝ կարծում եմ օգտակար կը լինի նախ արձանագրել ժողովրդական կեանքի այն խոշոր երեսոյթները, որոնց մէջ արտայայտում է ճապոնացու բանաստեղծական ոգին:

\* \* \*

Երբ փետրուարի վերջն ցրտերը, որոնք՝ իդէպ է ասել՝ խիստ չեն ճապոնիայի կենարոնում, տեղի են տալիս մարտի ջերմ եղանակներին, մի քանի օրում սալորի կոկոնները բացւում են և իրանց սպիտակ ծաղիկներով ասես շարունակում են ձմրան անցը-նող ձիւնը: Այս զուգադիպութիւնը չի խուսափել Նիպպոնի բանաստեղծներից: Նրանցից մէկը՝ Բոնզա Սոսէին, որ ապրում էր 18 դարում – ճապոնական գրականութեան ոսկեդարում, ասում է հետեւեալը.

«Արծաթափայլ մացառների մէջ ով է երգում. սուխակը, որ խարուած է գարուն տեսնելու իր տեսչանքից. բայց գարունը այս տարի ծոյլ է, և թոշունը ձեան վերջին փաթիլները ընդունում է սալորի ճերմակ ծաղիկների տեղ»:

Տարուայ այդ եղանակին (մարտ ամսին) հետաքրքիր ճապոնացիների ահագին բազմութիւն, տօնական շորերով՝ ինչպէս եկեղեցական մի հանդիսի ժամանակ երկար շարքերով՝ կազմում են գեղեցկութեան ուխտագնացութիւն դէպի պարտէզներն ու այգիները, ուր ծաղկել են սալորենիները: Նրանք շատ անգամ թողնելով ամեն ինչ՝ շատ հեռուից գալիս են միմիայն սալորի ծաղիկները տեսնելու համար: Այս պարզ փաստի մէջ մի թանկագին ցուցմունք կայ հոգերանի համար, մանաւանդ՝ որ զարթնող բնութեան այս առաջին ժպտի ինքնարերաբար պաշտամունքը արտայայտում է հասարակական կազմի մի ծայրից միւսը իւրաքանչիւր ծառի ծաղկելու ժամանակ: Սալորենիներից յետոյ ծաղկում են կեռասենիները: Թերթերը օրէցօր հասարակութեանը յայտնում են կոկոնների դրութիւնը և կանխաւորում են այն ժամը, երբ ապրիլի արեգակը նրանց կիսարաց, վարդագոյն կուրծքը կը համբուրի: Ճապոնացիք քնքոյշ զգայունութիւն ունին, նրանք գերադասում են առաջին օրուայ Փետրուար, 1904.

«Հաղիւ ծաղկածը» փարթամօրէն փթթածից, որ հարեան է խամրելուն: Եթէ, սակայն, նրանք կարողանում են հազւագիւտ յաջողութեամբ երգել խուսափող նրբութիւնները անցնող և մեռնող իրերի, այդ շնորհը պարտական են բուդայականութեան ազդեցութեանը, որ միջին դարում հզօրապէս ազդեց ճապնական ազգային հոգու վրայ:

Երբ կեռասենին՝ «ծաղկող ծառերի այս թագաւորը» բաց է անում իր գանձերը վարդագոյն ձեան նման, հասարակութիւնը մի անօրինակ եռանդով շնապում է այցելել Ռւենօի, Շիբայի պարտէզները (պարկ), Մուկոժիմատի, Կոզանէի ափերը և շատ ուրիշ տեղեր, որոնք զարդարուել են այս գրաւիչ ծաղիկներով: Սալորենին, չնայելով իր ենթադրեալ չինական ծագման, արդէն դարձել է իսկական պաշտամունքի մի առարկայ, բայց այս պաշտամունքը դառնում է աստուածացումն, երբ հարցը վերաբերում է կեռասակնուն, որ ճապնական հողի ծնունդ է: Որպէս ապացոյց՝ ես կը բերեմ Մոտորի, ազգային աւանդութիւնների պաշտպան այս բանաստեղծի ասածը.

«Եթէ մէկը ձեզ հարցնի, թէ ո՞րն է ճապնական ոգին, պատասխանեցէք. ճնա նման է կեռասենուն, որ տարածում է իր բուրմունքը Մագող Արկի առաջ»:

Ով որ չի տեսել այս ժողովրդի մանկական ուրախութիւնները սիրած ծառերի տակ և չի մասնակցել այդ զուարճութիւններին, երբէք չի կարող իմանալ, թէ ինչ ահազին ազդեցութիւն է անում ծաղիկների արբեցուցիչ բուրմունքը արտիստների այս ազգի վրայ:

\* \* \*

Կեռասենու ծաղիկը ժամանակաւոր է, նա շուտով խամրում է և անցնում: Բայց եթէ «ընկած ծաղիկը էլ չի բարձրանում ճիւղի վրայ», դրա փոխարէն անթիւ նիւանմներով իրիսը, լճակների մարգարիտ՝ Լոտուր, Խրիզանտեմը և Թխկնին, որոնցից մէկը բերում է և միւսը ճամապարհ դնում աշունը—այս բոլորը յաջորդաբար դառնում են երկրպագութեան առարկաներ իւրաքանչիւր ծաղկի բնոյթի և իւրաքանչիւր եղանակի համեմատ: Նոյն կարգի զգացմունքների արտայայտութիւնն է նաև ճապնացիների առանձին սէրը ծառերի ոլորուն կամ ուռուցիկ բների, տարօրինակ քարերի և սրբազն լեռների ուժատագութեան համար: Նոյնպէս ամենաազգատիկ խրճիթներում, ուր մեզ մօտ դժուար է գտնել գեղասիրական զգացմուն-

քի չնչին հետք, ճապոնացին մի առանձին անկիւն ունի յատկացրած իր կակեմոնոին մի տեղ՝ եղանակին պատշաճ ժաղկեփունջ դնելու համար։ Այստեղ դրուած է նաև սանտիմանոց (Յ կոպ.) մի հովհար, որի վրայ մի բանաստեղծ թողել է մէկն իր այն յանգերից, որոնք մեզ շփոթում են իրանց հակիրճ արտաքինի տակ թագցրած խորհրդով։ Զկայ մի թափառական, մի թիավար կամ բեռնակիր, որ անզիր չիմանայ մի քանի տասնեակ ոտանաւորներ, և որ իր հերթին նոյնպէս չկազմէ ուրիշները թէկուզ խմելուց յետոյ փսիաթների վրայ ծալապատիկ նստած ժամանակ։

Այս բոլորը մեզ ցոյց է տալիս, թէ որն է այն գլխաւոր աղբիւրը, որտեղից քաղում է ճապոնացին իր ներշնչումները։ Դա պաշտամունքի հաւասար մի սէր է դէպի բնութիւնը և այն ոչ թէ ընդհանրապէս բնութիւնը, Ալուա mater-ը, որից ժագում է ամբողջ կեանքը, այլ միայն նրա այն մասը, որի հետ նա շփում է, որը մի տեսակ շարունակութիւն է իր գոյութեան։ Եւ այն էլ ճապոնացիներն ըմբռնում են միայն արտաքուատ, երբէք չեն ցոյց տալիս մեզ խորհրդաւոր գաղտնիքները, որոնք թագնուած են անցնող երևոյթների տակ։ Նրանք այդ մասին ոչինչ չգիտեն։ Այս պատճառով ճապոնական բանաստեղծութիւնը նկարագրական է և նրանում պակասում է լայնութիւնը։ Նրանց բանաստեղծութիւնն էլ նման է իրանց թեթև նկարներին, ուր նրանք կարողանում են տպաւորութեան յակսիմումը ստանալ միջոցների մինիմումով, որովհետև բարեխիղճ ճշտութեամբ արձանացնում են այն, ինչ տեսնում են և հասկանում։ Նրանց Ուտաները շատ յաճախ ոչ այլ ինչ են, եթէ ոչ չափածոյ բառերով թարգմանութիւն իրանց ջրանկարների և գունաւոր մատիտներով շինուած պատկերների, որ ամեն մարդ ճանաչում է։

\* \*

Սակայն անկարելի է երևակայել, որ մի այսպիսի իրապաշտ ժողովուրդ բաւականանայ միմիայն արտաքին աշխարհի նկարագրութիւնով մի կողմ թողնելով առաջինը և ամենակենդանին բոլոր իրականութիւններից, այսինքն մարդը իր զգացողութիւնների և զգացմունքների անվերջ ելեէջներով։ Եւ արդարեւ նրանք հասկացել են մարդուն, բայց շատ քիչ են շահագործել։ Ինչպէս բոլոր արևելցիները, նրանք էլ իրանց հոգու խորին զգացմունքները աշխարհին յայտնելու համար միշտ որոշ զգուշաւորութիւններ ունեն։ այս ամօթխածութիւնը գու-

«հազիւ ծաղկածը» փարթամօրէն փթթածից, որ հարևան է խամբելուն: Եթէ, սակայն, նրանք կարողանում են հազւագիւտ յաջողութեամբ երգել խուսափող նրբութիւնները անցնող և մեռնող իրերի, այդ շնորհը պարտական են բուդդայականութեան ազդեցութեանը, որ միջին դարում հզօրապէս ազդեց ճապոնական ազգային հոգու վրայ:

Երբ կեռասենին՝ «ծաղկող ծառերի այս թագաւորը» բաց է անում իր գանձերը վարդագոյն ձեան նման, հասարակութիւնը մի անօրինակ եռանդով շտապում է այցելել Ուենօի, Շիքայի պարտէզները (պարկ), Մուկոժիմաի, Կոգանէի ափերը և շատ ուրիշ տեղեր, որոնք զարդարուել են այս գրաւիչ ծաղիկներով: Սալորենին, չնայելով իր ենթագրեալ չինական ծագման, արդէն դարձել է իսկական պաշտամունքի մի առարկայ, բայց այս պաշտամունքը դառնում է աստուածացունն, երբ հարցը վերաբերում է կեռասենուն, որ ճապոնական հողի ծնունդ է: Որպէս ապացոյց՝ ես կը բերեմ Մոտորի, ազգային աւանդութիւնների պաշտպան այս բանաստեղծի ասածը.

«Եթէ մէկը ձեղ հարցնի, թէ մըն է ճապոնական ոգին, պատասխանեցէք. նա նման է կեռասենուն, որ տարածում է իր բուրմունքը Մագող Արեի առաջ»:

Ով որ չի տեսել այս ժողովրդի մանկական ուրախութիւնները սիրած ծառերի տակ և չի մասնակցել այդ զուարճութիւններին, երբէք չի կարող իմանալ, թէ ինչ ահազին ազդեցութիւն է անում ծաղիկների արբեցուցիչ բուրմունքը արախստների այս ազգի վրայ:

\* \* \*

Կեռասենու ծաղիկը ժամանակաւոր է, նա շուտով խամրում է և անցնում: Բայց եթէ «ընկած ծաղիկը էլ չի բարձրաւնում ճիւղի վրայ», դրա փոխարէն անթիւ նիւանսներով իրիսը, լճակների մարգարիտ՝ լոտոսը, Խրիզանտեմը և Թխկենին, որոնցից մէկը բերում է և միւաը ճանապարհ դնում աշունը— այս բոլորը յաջորդաբար դառնում են երկրպագութեան առարկաներ իւրաքանչիւր ծաղկի բնոյթի և իւրաքանչիւր եղանակի համեմատ: Նոյն կարգի զգացմունքների արտայայտութիւնն է նաև ճապոնացիների առանձին սէրը ծառերի ոլորուն կամ ուսուցիկ բների, տարօրինակ քարերի և սրբազն լեռների ուժագնացութեան համար: Նոյնպէս ամենաազգատիկ խրճիթներում, ուր մեզ մօտ դժուար է գտնել գեղասիրական զգացմուն-

թի չնշին հետք, ճապոնացին մի առանձին անկիւն ունի յատկացրած իր կակեմոնօին մի տեղ՝ եղանակին պատշաճ ժաղկեփունջ դնելու համար. Այստեղ դրուած է նաև սանտիմանոց (Յ կոպ.) մի հովհար, որի վրայ մի բանաստեղծ թողել է մէկն իր այն յանգերից, որոնք մեզ շփոթում են իրանց հակիրճ արտաքինի տակ թագցրած խորհրդով: Զկայ մի թափառական, մի թիավար կամ բեռնակիր, որ անգիր չիմանայ մի քանի տասնեակ ոտանաւորներ, և որ իր հերթին նոյնպէս չկազմէ ուրիշները թէկուզ խմելուց յետոյ փսիաթների վրայ ծալապատիկ նստած ժամանակ:

Այս բոլորը մեզ ցոյց է տալիս, թէ ո՞րն է այն գլխաւոր աղբիւրը, որտեղից քաղում է ճապոնացին իր ներշնչումները: Դա պաշտամունքի հաւասար մի սէր է դէպի բնութիւնը և այն ոչ թէ ընդհանրապէս ընութիւնը, Alma mater-ը, որից ծագում է ամբողջ կեանքը, այլ միայն նրա այն մասը, որի հետ նա շփում է, որը մի տեսակ շարունակութիւն է իր գոյութեան: Եւ այն էլ ճապոնացիներն ըմբռնում են միայն արտաքուատ, երբէք չեն ցոյց տալիս մեզ խորհրդաւոր գաղտնիքները, որոնք թագնուած են անցնող երևոյթների տակ: Նրանք այդ մասին ոչինչ չգիտեն: Այս պատճառով ճապոնական բանաստեղծութիւնը նկարագրական է և նրանում պակասում է լայնութիւնը: Նրանց բանաստեղծութիւնն էլ նման է իրանց թեթև նկարներին, ուր նրանք կարողանում են տպաւորութեան մակարիսումը. ստանալ միջոցների մինիմումով, որովհետև բարեխիղճ ճշտութեամբ արձանացնում են այն, ինչ տեսնում են և հասկանում: Նրանց Ուտաները շատ յաճախ ոչ այլ ինչ են, եթէ ոչ չափածոյ բառերով թարգմանութիւն իրանց ջրանկարների և գունաւոր մատիտներով շինուած պատկերների, որ ամեն մարդ ճանաչում է:

\*\*\*

Սակայն անկարելի է երևակայել, որ մի այսպիսի երապաշտ ժողովուրդ բաւականանայ միմիայն արտաքին աշխարհի նկարագրութիւնով մի կողմ թողնելով առաջինը և ամենակենդանին բոլոր իրականութիւններից, այսինքն մարդը իր զգացողութիւնների և զգացմունքների անվերջ ելեկջներով: Եւ արդարն՝ նրանք հասկացել են մարդուն, բայց շատ քիչ են շահագործել: Ինչպէս բոլոր արևելցիները, նրանք էլ իրանց հոգու խորին զգացմունքները աշխարհին յայտնելու համար միշտ որոշ զգուշաւորութիւններ ունին. այս ամօթխածութիւնը գու-

ցէ առաջ է գալիս ծածկամտութիւնից, գուցէ մի դիմակ է ծածկելու համար սրտերի սաստիկ չորութիւնը, կամ գուցէ պարզապէս ինքն իրան քննելու անկարողութիւնն է։ Հաւանական է, որ այս բոլորից էլ մի քիչ կայ, և ահա թէ ինչու ճապոնաց, չինաց և նոյնիսկ հնդիկների քնարերգական բանաստեղծութիւնը աւելի քիչ տեղ է բռնում, քան նկարագրականը։

Սակայն ասիացին նոյնպէս ունի ամբողջ մարդկութեան յատուկ այն հոգեկան աղքիւրը, որտեղից ծնում են տրտմութիւնը և ուրախութիւնը, սէրը և ատելութիւնը, զայրոյթը և իղձը եւ նոյնիսկ հակառակ իր կամքի՝ այս յակտենապէս անփոփոխ խորքից որոշ ժամերին ժայթքում են մոքեր և խօսքեր, ծնունդ է առնում բանաստեղծութիւն։ Ահա թէ ինչ է գըրում այդ մասին ճապոնական մեծ բանաստեղծներից մէկը՝ ծուրափիւկին, որ հաւաքել է «Հին և նոր երգերը» (Կոկինչուն)։ այս, ինչ անուանում են բանաստեղծութիւն, ծնունդ է առնում մեր սրտից։ մարդ ցանկանում է արտայայտել խօսքերով իր ներքին զգացմունքները։ Այդ ներքին աշխարհում քանի տեսակ յոյզեր, արդ՝ ամեն մի արտայայտուած յոյզ բանաստեղծութիւն է։

Ապա դառնալով ճապոնական բանաստեղծութեան ծագմանը՝ նա աւելացնում է։

«Սոխակի երգը, գորտի կրկոցը նոյնպէս իրանց տեսակի պոչմաներ են։ Ամեն ինչ, որ ապրում է, ունի և արտադրում է իր բանաստեղծութիւնը»։

Չնայելով այսքան որոշ և ճիշտ ըմբռնումին՝ ճապոնական բանաստեղծութիւնը, որպէս գրողի անհատական զգացմունքների արտայայտութիւն՝ բաւականին աղքատ է։ անձնաւորութիւնը երգէք մեծ դեր չի խաղացել այս հետաքըրքիւ ժողովրդի մէջ, որի լեզում պակասում են իսկական յատկանիշները, և որի բայերն անձնական ֆորմուլաներ են։ Անձը կանխամտածումով ծածկում է։ զգացմունքի լեզուով խօսելու փոխարէն բանաստեղծութիւնը աշխատում է արտայայտուել համեմատութիւններով, մութ ակնարկներով, մինչև այն աստիճան, որ բանը հասնում է գուշակութիւնների և հանելուկների։ Հեռուից այսպիսի սովորութիւնը թւում է երեխայական, սակայն նա ունի նաև իսկական հմայք, որ ճապոնական միջավայրում ապրող մարդը ճաշակում է՝ առանց կարողանալու այն բացատրել։

Ահա օրինակ սիրոյ մի պատկեր։

«Ծովային մամուսի ոստերը զատ-զատ լողում են ջրերի երեսին, բայց նրանք միայն մի արմատ ունին»։

Փոխանակ արտաստելու և մեղ պատմելու իր սրտի վիշտը՝ աքսորական բանաստեղծը կ'ասի.

«Չմրանն ի՞նչ տիսուր ես, ով իմ խուզ,  
Ո՞ւր են քո բնակլիչները—մեկնեցին.

Քո ծաղիկնե՞րը... խամբեցին»:

Պատահում է, որ ճամեմատութիւնները վերջանում են անհատական յոյզերի պորթկումով։ Ահա օրինակ այս գունատ թարգմանութիւնը մի երգի, որով նիբին ողբում է իր սիրուհու մահը. ես կասկածում եմ, թէ մենք կարողանանք սրանից աւելի յուզիչ բան գտնել մեր բանաստեղծութեան մէջ։

«Ո՞վ չի ճանաչում որորներին, որոնք կտցահարում են ծածկուող արևի ոսկեզօծած եղեգնուափ մէջ։ Ո՞վ չի տեսել նըրանց զոյգ-զոյգ թռչելիս առաւօտեան շղթերով պայծառացած ալիքների վրայով։ Ասում են, որ ձմերային գիշերներին այս խոճուկ թռչունները սղմուռմ են իրար կողքի՝ երկիւղը վանելու և ցրտից պաշտպանուելու համար... իսկ ե՞ս... ինչպէս որ զառիվայրից իշուղ գետը էլ երբէք չի բարձրանայ, ինչպէս որ քամին փշում է առանց հետք թողնելու, այդպէս է և ողորմելի մարդկանց վիճակը, որոնք անցնում են անհետ... Ի՞նչ մնաց ինձ նրանից, որին սիրում էի. միայն այս զգեստը, որ նա գործել է ինձ համար, և որով փաթաթւում եմ ու կծկում իմ դատարկ անկողնում։ Ես արտասում եմ, նրան էլ երբէք չեմ համբուրի, և նա ինձ չի համբուրի»։

Նկարագրական և քնարերգական բանաստեղծութիւնից դուրս ճապոնացիք մշակել են նաև ուրիշ ժամաներ. ինչպէս էրոսիկ, սատիրիկ, ծիծաղալարժ։ Հետևեալ անեկդոտը ցոյց է տալիս այն սահմանները, որ նրանք տալիս են մուսաների աշխարհին. —Մի երիտասարդ գրականագէտ գնաց մի անգամ հոչակաւոր կագաւախ մօտ (կագեկի՝ իր գրական անունով) հարցնելու, թէ ի՞նչ նիւթ ընտրի և ինչպէս մշակի։ Հազվիւ նա վերջացրել էր իր հարցը, երբ տօֆու (ծեծուած լորու խմորելէն) ծախող մի մարդ անցաւ դրան առաջից՝ ոտանաւորով կանչելով իր ապրանքի մասին։ Կագաւան դիմելով իր աղախնուն՝ դարձեալ ոտանաւորով պատւիրում է տօֆու գնել։ Սրանով նա ուզում էր հասկացնել որ ամեն մինիւթ յարմար է, եթէ միայն լաւ մշակուի։

\* \* \*

Եթէ բանաստեղծական ներշնչումից անցնենք նիւթի մըշակութեան և ճապոնական բանաստեղծութեան պլաստիկ ձեե-

բին, մենք ուրիշ անակնկալներ կը տեսնենք: Մայրայեղօրէնպարզ և միշտ միակերպ չափ, վերին աստիճանի հակիրճ, ահա երկու բնորոշ գծերը, որոնք աչքի են ընկնում:

Ճապոնական բանաստեղծութիւնը միայն երկու տեսակ չափ է ճանաչում—մէկը 5, միւսը 7 վանկանի, և բանաստեղծական երկու դարձուածք՝ որոնցից առաջինը ունի երեք չափ՝ 5, 7, 5 վանկանի և երկրորդը՝ երկու չափ՝ 7 և 7 վանկանի: Ես խօսում եմ այստեղ Վահաբի կամ ազգային երգերի մասին, որ սիրում էին շարադրել հսերը, և որոնք այսպէս գրաւում են իսկական գրականագէտներին:

Ահա երկու օրինակ ճապոնական լեզուով, մէկը բարձր և միւսը ստորին բանաստեղծութեան՝ նրանց չափը ցոյց տալու համար.

«Կադո մատցու վա,  
Մէյդո նօ տարիջի  
Իշի-ըի-ցուկա.  
Մեղետակու մօ արի  
Մեղետակու մօ նաշի»:

Այս բանաստեղծութիւնը, որ հեղինակութիւն է իր գրաւիչ սկեպտիցիզմով հոչակուած Բոնզա Իկկիյիւի, նշանակում է հետևեալը.

«Կեանքի ճանապարհին (հանդերձեալ կեանքի) մեր տների առաջ տարեմուտին տնկուած սոճին նման է սահմանների կոպարին. նա ունի իր ուրախութիւնները և իր վիշտը»:

«Իօ նօ նակա նի  
Ներու հոդո բակու վա  
Նակարիկերի.  
Ուկի-իօ նօ բակա վա  
Օկիս հատարակուա,

որ նշանակում է՝ «այս աշխարհում ոչ մի հաճոյք չի կարող հաւասարուել քնելուն. միայն անմիտներն են վեր կենում և աշխատում»:

Մայրայեղ կարճութիւնը միւս բնորոշ յատկութիւնն է ճապոնական բանաստեղծութեան, ինչպէս տեսանք: Արդեօք շնչի կարճութիւնն է պատճառ, թէ դիտաւորեալ ձևով է, որ ճապոնական արտիստները բանաստեղծութիւնը նկատում են որպէս մի ճիշ կամ խուսափող զգացողութիւն հակիրճ ձևով արտայայտող երգ:

Դժուար է ասել. իրողութիւնն այն է սակայն, որ որոշ տեսակի բոմաններից և դրամատիկական պիեսաների չափածոյ պրոզայից դուրս՝ ճապոնիայում իրեւ բանաստեղծութիւն գու-

յութիւն ունին միայն կարճ-կարճ խրատներ, մասրիկ օդաներ,  
երեք-չորս բառից կազմուած էպիգրամմներ:

Այսպէս հետևեալ տողերից իւրաքանչիւրը կազմում է  
կատարեալ բանաստեղծութիւններ:

«Բամին ցրիւ է տալիս կեռասենու ծաղիկները,

Եւ անձրեւ թափում է այն ժամանակ,

Անձրեւ՝ կազմուած նրանց համար հոսող արցունքներից»:

«Լուսնի լուսով

Ի՞նչպէս ճանաչել սարդինու ծաղիկները. —

Նրանց բուրմունքին հետևելով»:

«Բանի-քանի՛ անգամ ես որոշումներ եմ արել

Եւ յետոյ ինքս էլ փոխել.

Եթէ կայ մի բան, որի վրայ չպէտք է յոյս դնել,

Դա մեր սեփական սիրտն է»:

«Ո՞ւմ ձայնն է այս.

Միթէ լուսինն է երգում.

Ոչ, սա կկուն է»:

Եւ ամենահին ժամանակներից սկսած այսպէս է: Եթէ  
դարերի ընթացքում կառավարչական ձևը, գեղարուեստի զա-  
նազան ճիւղերը, կրօնը, բարքերը ենթարկուել են էվոլյուցիայի,  
բանաստեղծութիւնը մնացել է նոյնը ըստ էութեան և ըստ  
ձերի: Ճապոնական սուլր գրքի՝ Կոժիկիի մի աւանդութիւնը  
պատմում է մեզ, թէ ինչպէս կազմուեց առաջին կարճ երգը,  
որ յետոյ նմուշ դարձաւ միւներին: Արև աստուածուհին, օ-  
գոստափառ «Ամատիրասու Օ միկամի նօ միկոտօն», այն ժա-  
նակ, երբ նա կառավարում էր ճապոնական իր կայսրութիւ-  
նը, մի եղբայր ունէր Սուլանօօ անունով, բիրտ և անհանգիստ:  
Իր քրոջ աստուածային իշխանութեանը հասցրած մի ծայրա-  
գոյն վիրաւորանքի համար երկնքից հալածուելով նա գնաց  
աշխարհ կոփիներ անելու իզումօի մնախւրասէր ափերի վրայ:  
Բազմաթիւ քաջագործութիւններից յետոյ, որոնցից նշանաւորը  
մի հրշաւոր հիլրայի սպանութիւնն էր, հերոսը սիրահարուեց  
գեղեցիկ կուշինադաւ-Հիմէի վրայ, որ այն կողմերի իշխանի  
դուստրն էր: Նա իսկոյն ձի նստեց և գնաց տիրանալու  
նրան՝ իր կեանքի ընկերը դարձնելու համար: Ոտքը ձիու աս-  
պանդակը դնելիս նա բացագանչեց ոտանաւորով.

«Ռւթ ամպեր բարձրացան.  
Այս բարձրացող ամպերից ես կը կազմեմ ութտակ պա-  
տուարներ,

Որոնց յետնում ես կը պահեմ իմ ամուսինը.

Օ՛, ինչ գեղեցիկ է այս ամրութիւնը,

Այն ամրութիւնը՝ ութ անգամ փակուած»:

Այս կարճ կտորի մէջ արդէն երևում են յետագայ բա-  
նաստեղծութեան բոլոր թերութիւններն ու առաւելութիւն-  
ները, այստեղ նկատնում է արդէն սիրային մի որոշ երազանք՝  
վշացրած բառերի խաղով, օրինակ՝ Խօկումօ (ութ ամպ), Խզումօ  
(մի գաւառի անուն, որ նշանակում է միևնոյն ժամանակ բար-  
ձրացող ամպ):

\* \*

Ճապոնական բանաստեղծութիւնը կարելի է բաժանել  
հետևեալ դասերի.

1. Բարձր ժանր, որ պարունակում է բացառապէս Վա-  
կաները, կամ ազգային երգերը, որոնք չեն ենթարկուել ոչ  
ուսմիկ լեզուի և ոչ չինարէնի ազդեցութեանը: Ահա մի սիրուն  
նմուշ այսպիսի բանաստեղծութեան, որ IX դարում Բոնզա-  
Կործ Դայիշին ուսանաւորների է վերածել.

«Ինչքան և բոյց ոնեննայ ծաղիկը, նա այնուամենայնիւ կը  
խամրի.

Այս աշխարհում ով կարող է պարծենալ, թէ ինքը յաւի-  
տենական է:

Այսօր ես անցայ բարձր սարերից...

Եւ ես պահեցի միայն մի թեթև երազի յուշերը,

Մի երազ, որ չի կարող արբեցնել»:

2. Խառն ժանրը, ուր կարելի է տեսնել, ինչպէս անունը  
ցոյց է տալիս, թանգագին ակներ խառնուած խճերի հետ: Այս  
բանաստեղծութիւնը պիտի պարունակի միայն 3 չափ—5, 7, 5  
վանկանի և կազմի մի ամբողջութիւն, որ երբ կրկնակի միտք  
ունի, իսկական և պատկերաւոր, աւելի արժէք է ստանում:  
Արտայայտութիւնների ծայրայեղ կարճութիւնը և ակնարկնե-  
րը, որոնք այնպէս գժուարահասկանալի են օտարականների  
համար, անկարելի են դարձնում թարգմանութիւնը, Ահա սա-  
կայն մի քանի նմուշ գաղափար տալու համար:

Հոչակաւոր Շիօն, կին-բանաստեղծը, որ ապրել է XVIII  
դարում, գրում էր հետևեալը.

«Ազագա նի  
«Յուրուբէ տորատետ,  
«Մոորաէմիցու»,

որ նշանակում է. «Ջրհորի պարանը բռնել է մի բառեղ, էլ և վ ջուր կը տայ ինձ»:

Այս բանաստեղծութիւնը մի վայրկենական (instance) նկարի հմայքն ունի: Ահա բանաստեղծը, որ արել ծագելիս պատրաստում է ջուր քաշել հորից լուացուելու համար: Բայց գիշերը մի փոքրիկ ծաղիկ նրանից առաջ է անցել՝ բըսնելով ջրհանի պարանը. թնչ անի կիրթ ճաշակի տէր այս կիւնը: Մազկի խղճուկ ծիլը կտրելու փոխարէն նա գերադասում է ջուր ինդրել: Անշուտ սա մի չնչին բան է, բայց հիանալի է:

Երկրորդ օրինակը վերցնում ենք Կավագուշի բարոնից, որ կայսերական տան փոխ-մինիստր էր և 1901 թ. հրաժարական տուեց մի զգուելի կուսակցութեան ճնշման տակ:

«Անցեալ՝ ամպ է.—Կակովա կումօ,  
«Ապագան՝ անձրեւ.—Միրայի միզա իա:  
«Եւ կամ ձիւնէ փիրուն արձան.—Խուկի բոտուկէ:  
«Դէհ, մնաս բարի.—Մարաբա տոտէ:  
«Գնում է հալածուած.—Օիերա նիգուրու ի ա:  
«Խղճուկ ճանճը ճմեռուայ.— Ֆոցիու նօ հայի»:

Այս երկու հոկկան մեծ ընդունելութիւն գտան մամուլի մէջ, ամենքը միաբերան գովում էին շիտակ և միենոյն ժամանակ խելացի մարդու «մնաս բարին»:

Այս խառն ժանրին պատկանում են նաև երեք այլ տեսակներ. ա) Կիօկա, մի տեսակ խենթ երգ՝ վատ ճաշակի կատակների համար: Ահա մի օրինակ այս վերիջինից. «Աշնան երկինքը և կնոջ սիրոց նման են իրար. մի գիշերուայ մէջ երկուսն էլ փոխում են եօթն անգամ»: գ) Շինտէշի կամ նոր բանաստեղծութիւն. սա միակ յեղափոխիչ փորձն է ճապոնական գըրականութեան մէջ, որ կատարուել է արևմուտքի բանաստեղծութեան սիրահար երիտասարդների չնորիիւ:

3) Ռամիկ ժանրը. Ճապոնական տեսակէտով է, որ ես անուանում եմ այս կարգի բանաստեղծութիւնը ուամիկ, որովհետեւ երբեմն նա լիովին արդարացնում է վերնագիրը, բայց շատ անգամ էլ պարունակում է ամենաընտիր, ամենազրաւիչ կտորներ, ինչպէս օրինակ՝ Ժորուրին—դրամատիկական պատմուածքներ ժողովրդի համար:

Այս համառօտ տեսութիւնից հեշտ է եղրակացնել, որ ճապոնական բանաստեղծութիւնը բաւական միակերպ է: Բայց դրա հետ միաժամանակ ընդունելու է, որ ճապոնացիք հրաշալի նկարիչներ են այն բնութեան, որ ապրում է, երգում և մեռում, նրանք աննման արձանագրողներ են ձայների և գոյների: Նրանց լեզուն էլ շատ յարմար է բռնելու համար թըրթուցող լոյսի և հնչիմների այս աշխարհը, ուր նրանք սիրում են շարժուել:

Ձեան տակ կրացող բամբուկի ձայնը, եղևնու փշերի վրայ վշող քամու վզոցը լսելու կամ ամսամած գիշերին լուսնի աղօտ լոյսի պատճառած թախիծը ճաշակելու համար ճապոնացին կարիք չունի ականջ դնել կամ նայել բնութեանը: Ցանկալի իւլիւզիան ստանալու համար բաւական է կարդալ Մանիօշու ժողովածուն, որ որքան հին է, նոյնքան և յարգուած:

Այժմ տեսնենք, թէ բանաստեղծութիւնը՝ որպէս գեղարուեստի մի ճիւղ՝ պատմութեան զանազան շրջաններում ի՞նչ տեղ է բռնել հասարակութեան տարբեր դասակարգերի մէջ:

Հստ աւանդութեան՝ բանաստեղծութիւնը հնարել են մարտիկները նախնական ճապոնիայի մեծ հերոսների զուարճութեան համար: Այսպէս Սուլանօից յետոյ, իր աներձագը՝ Օնամուշին հնարեց Շոկան կամ երկար երգը, ապա իամատօնակէն, անյաղթը, որ իր զինակիցների հետ կազմեց ռազմական երգերը մեր տարեգրութեան առաջին դարերում: Այսուհետև երբ միկադները՝ որպէս անվիճելի տէրեր հայրենի հողի՝ տարածում են խաղաղութեան և բուդայականութեան հետ ներս բերուած չինական քաղաքակրթութեան բարիքները, իրանք դամում են բանաստեղծներ: Արդէն III դարում խաղաղասէր Նինտուկօ Տեննօն մոռանալով՝ որ իր սեփական պալատը աղքատութիւնից աւերտում է, իր ժողովրդի թշուառութիւնն ամոքելու համար երեք տարի բոլոր հարկերը վերացընում է և երգում հետևեալը, որ նկարչութիւնն անմահացըրել է.

«Իմ պալատի բարձրութիւնից

«Ես նայում եմ դաշտերին.

«Ամեն տեղից ծուխ է բարձրանում,

«Որպէս նշան իմ ժողովրդի բարօրութեան.

«Ուրեմն չկայ մէկը, որի կաթսան կրակի վրայ լինի»:

Ութերորդ, իններորդ և տասներորդ դարերը ճապոնական բանաստեղծութեան ոսկէ դարն են կազմում: Ակահիտօն, Զիտումարօն, Ցուրայուկին անմահ անուններ են, որոնք փայլում են:

այդ հեռաւոր ժամանակներում, և որոնց փայլին էլ ոչ ոք չի հաւասարում:

Միշտն դարերում սկսում է աւատականութեան տիրապետութիւնը և կենարոնսական իշխանութեան թուլութիւնը: Միշտեռ աւատական մեծ իշխանները պայքարում են երկրի խնամակալութեան (régne des) համար, միշտօի պալատը գտնում է գրականութեան և գեղարուեստի ապաստարան: Այստեղ ամենքն իրանց ձանձրոյթը փարատելու համար զբաղւում են ինտրիգաններով, մեծաշուք արարողութիւններով և ոտանաւորներ կազմելով: Նոյնիսկ կանայք աչքի են ընկնում իրանց նուրբ դաստիարակութեամբ:

Միշտօի պալատից այս կուլտուրան անցնում է շրջապատը: Ամեն մի լաւ սամուրայի (ազնւական) պարտը է զգում կազմել տան կա (բանաստեղծութեան մի տեսակը), ինչպէս որ զիտէ շարժել իր սուրբ: Այսպէս մի անգամ պայքարի մէջ մի սամարայի բռնելով իր ծեր հակառակորդի փեշից, պատրաստում է հարուածել, բայց փէշը պատուում է և մնում է ձեռքում: Այն ժամանակ բարձրացնելով իր սուրբ՝ նա արտասանում է վերշին նախադասութիւնը մի տանկայի, մրցութիւնների սովորութեան համեմատ.

«Թո զգեստի փէշը,

Բանից պրծաւ»

որ նշանակում է դու մեռած ես: Բայց միւսը, նաև քան պատրաստուղ հարուածի առաջն՝ առնելու, պատասխանում է նոյն բանաստեղծութեան առաջին մասով, որ լրացնում է իր հակառակորդի ասածը:

Վաղուց է, շատ վաղուց,

«Ճարիքն է պատճառը,

Որ նա գործուած է»:

Հակառակորդը հասկանում է և զինաթափ լինում:

\* \*

1868 թ. յեղափոխութիւնը և նրա առաջ բերած ընդհանուր փոփոխութիւնը ոչինչ նորութիւն առաջ չբերեց իրերի այս կացութեան մէջ: Բարձրաստիճան բազմաթիւ անձինք ունին դեռ ևս այն, ինչ կոչում է այստեղ «բանաստեղծութեան օրեր»: Այս ժողովներին ճշտապահութեամբ մասնակցողները ընդունում են բարձրագրտչ տիտղոսներ և ստանում են դիպոմներ: Կան բանաստեղծութեան ուսուցիչներ, ինչպէս մեզանում նկար-

չութեան ուսուցիչներ, որոնք դասեր են տալիս ժամով կամ սէանսով ըստ վճարի:

Մինչև իսկ այժմեան արքունիքը՝ չնայելով իր եւրոպական կարգերին՝ չի ազատուել հին աւանդութիւններից: Ահաւասիկ՝ օրինակ՝ բանաստեղծութեան մրցանակաբաշխութիւնը, որ կատարուեց պալատում 1902 թւին նոր տարրուայ առիթով: Նոցա կայսերական մեծութիւնները ուղարկել էին օդաներ, ինչպէս և ներկայ եղողներից իւրաքանչիւրը, և այդ բոլորը կարդացուել էր հրապարակով: Ոտանաւորների նիւթը խիստ բանալ' էր—սալորենու ծաղիկը՝ խորհրդանշան նոր կեանքի: Ոչ միայն նիւթը, այլ նոյնիսկ նրա վրայ հիւսուած ամբողջ տանկան շատ բան չարժէ: Էլի ամենալաւը իշխան Կէկիլիինն է.

«Ահա նոր տարին,

Վաղը նա մեզ բերելու է ուրախութիւն.

Երբ ես բաց էի անում լուսամուտս,

Անուշ բուրմունք ինձ պարուրեց.

Սալորենինները ծաղկել են»:

Ոչինչ այնպէս ճիշտ գաղափար չի տալիս ճապոնական հասարակութեան թեթև և նրբացած կուլտուրայի մասին, որքան հետևեալ քաղուածքը Տոկիօի մի յայտնի տիկնոջ յիշատակարանից: Տրագիրը կազմուած էր հրաւիրեալների բանտառեղծական նիւթերի ընտրութիւնը հեշտացնելու համար:

«Փետրուար.—Սպատերև ուռենին գարնանը.—Աքաղաղը արշալուսին:

Մարտ.—Առաւտօնեան մարտիուղը.—Յանկանալ բարեկամին սօնի ծառի պէս տաս հազար տարրուայ կեանք:

Ապրիլ.—Կեռասենու ծաղիկը իրեկնաղէմին.—Սիրոյ տենչ չը զսպուած ուրիշների երկիւղից:

Մայիս.—Կկուն՝ գիշերը.—Ժիօն և Ժիջօն (Կիոմորիի երկու լքուած սիրուհինները, որոնք դարձել են վանական):

Յունիս.—Հովհարը մի կնոջ սենեակում. Զկնորսի նաւակը, որ երևում է հեռուից լճի վրայ:

Սեպտեմբեր.—Լուսնին մտախոն նայելը.—Օիզոցի ջահել աղջիկը (Տորա Գոզեն):

Հոկտեմբեր.—Եղջերուն լեռներում.—Յանկարծական հանդիպումն սիրած կնոջ հետ և այլն»:

Ժողովուրդը հէնց որ շնորհիւ կրթութեան բացել է իր աչքերը, բնականաբար սկսել է այս թեթև վարժութիւնները:

Մի ժամանակ նոյնիսկ «ծաղիկների թաղը», այսինքն հասարակաց

կանանց թաղը իոշիվարառում դարձել էր բանաստեղծութեան և գեղարուեստական մրցութիւնների մի ծաղկած կենտրոն։ Այժմ էլ լրագրերն ու հանդէսները բոլոր ոտանաւոր կազմողների համար կապ են ծառայում։

Ես աչքի առաջ ունիմ մի քանի մրցանակաբաշխութիւններ, որ կազմակերպել էր Բունգէի-Կուրաբու հանդէսը։ Մըրցողներից մէկը արժանացաւ միայն իր անուան հրատարակութեան և քաջալերութեան։ Տաս հոգի ստացան 35 սենս (1 ֆրանկ), հինգը՝ 75 սենս։

Յաճախ մեղադրել են ճապոնացիներին, թէ նրանք օրիգինալ' չեն և օտարների յետնից են քաշ գալիս բոլոր այն նորութիւնների մէջ, որոնք աստիճանաբար կերպարանափոխեցին նրանց հասարակական և մտաւոր կեանքը։ Բայց բանաստեղծութեան մէջ գննէ նրանք պահպանողական են և մնացել են կապուած իրանց աւանդութիւններին։ Սա մի գովելի հանգամանք է, որովհետև բոլորն՝ ինչ նրանց հոգին ունի քնքոյշ, նուրբ և ընդունուած սահմաններում անհատական, դրական և երազող, այս բոլորը բիւրեղացել է աւելի նրանց ոտանաւորների, քան թէ գեղարուեստի այլ ճիւղերի մէջ։ Ահա այստեղ պէտք է ուսումնասիրել ճապոնացու հոգին, եթէ ուզում ենք նրան լաւ ճանաչել և դատել արդարութեամբ։

---